ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈ ԳՀԱՊՁԲ-20-9/20-1

ք. Երևան 30 -ը 01 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***9,984,494 (ինը միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա

չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[16] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[16] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան » ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հ/Հ. 007317779

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/20-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական հատկանիշներ	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	Հակաբիոտիկի դիսկ N50 Դոքսացիկլին	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ	Doxycycline	Liofilchem
2	Հակաբիոտիկի դիսկ N50 Բիսեպտոլ Co-trimoxazole	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ	Co-trimoxazole/Trimrthoprim+ sulfametixazole	Liofilchem
3	Հակաբիոտիկի դիսկ N50 Ցեֆեպին	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ	Cefepime	Liofilchem
4	Հակաբիոտիկի դիսկ N50 Նևիգրամոն Nalidix/ Acide	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ	Nalidixic acid	Liofilchem
5	Հակաբիոտիկի դիսկ N50 Ֆլյուկոնազոլ	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ	Fluconazole	Liofilchem
6	Հակաբիոտիկի դիսկ N50 Նիստատին	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ	Nystatin	Liofilchem
7	Հակաբիոտիկի դիսկ N50 Կետոկոնազոլ	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ	Ketoconazole	Liofilchem
8	Հակաբիոտիկի դիսկ N50 Կլոտրիմազոլ	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում '50 հատ, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորումով տուփ	Clotrimazole	Liofilchem
17	Իմունոգլոբուլին E թեստ	Լրակազմում՝ 100 թեստ, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: 2-8 C ջերմային ռեժիմ	IgE G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics
18	Վիտամին D թեստ	Լրակազմում՝ 100 թեստ, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: 2-8 C ջերմային ռեժիմ	Vitamin D total G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics
19	Իմունոգլոբուլին E CS	Կալիբրատորը նախատեսված է համապատասխան ռեագենտի համար, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: 2-8 C ջերմային ռեժիմ:	IgE CS Elecsys	Roche Diagnostics
20	Վիտամին D CS	Կալիբրատորը նախատեսված է համապատասխան ռեագենտի համար, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: 2-8 C ջերմային ռեժիմ	Vitamin D total G2 CS Elecsys	Roche Diagnostics
21	Հալոգենային լամպ Cobas 400 plus-ի համար 12Վ/100Վատ	12V/100W հզորությամբ, գործարանային փաթեթավորմամբ:	LAMP HALOGEN 12V/100W ASSY	Roche Diagnostics
22	Ազդանյութի ամրակալ Docking mechanism waste C1/C2/S1	նախատեսված է cobas b 121 անալիզատորի համար ազդանյութի ամրակալ	DOCKING MECHANISM C1/C2/S1	Roche Diagnostics
23	Docking mechanism waste	նախատեսված է cobas b 121 անալիզատորի համար թափոնի ամրակալ	DOCKING MECHANISM WASTE cobas b 121	Roche Diagnostics
24	LC109 զտիչ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված, LC109, 0.05 միկրոն թողունակությամբ, գործարանային փաթեթավորմամբ:	LC 109 Ultra Microfilter	ELGA
25	LC174 քարթրիջներ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված, LC174, գործարանային փաթեթավորմամբ:	LC 174 Medpure L1 DI pack	ELGA
26	LC177 նախնական զտիչ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված, LC177, գործարանային փաթեթավորմամբ:	LC 177 L2 Pre-Treat	ELGA
27	LC180 ռևերսիոսմոսային զտիչ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված, LC180, գործարանային փաթեթավորմամբ:	LC 180 Reverse Osmosis module	ELGA
28	LC181 CO2 զտիչ	Medica Pro R60 -ի ջրի դեիոնիզատորի համար նախատեսված, LC181, գործարանային փաթեթավորմամբ:	DEGASSING CARTRIDGE, LC181	ELGA

29	Ral StainBox հարքի ներկերի հավաքածու	Լրակազմում՝ MCDh 1 - 1x230ml, MCDh 2 - 2x230ml, MCDh 3 - 1x230ml, MCDh 4 - 4x230ml, գործարանային փաթեթավորմամբ:	KIT RAL STAINBOX MCDH	Sysmex (RAL Diagnostics)
32	Շեդլերի միջավայր փոշի	միկրոօրգանիզմների աճեցման համար 500 գր պլաստիկ փաթեթավորում, գործարանային փաթեթավորմամբ:	Scheadler agar base	Liofilchem
36	Հակաբիոտիկի դիսկ N50 Լևոֆլքսացին	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում՝50 հատ սրվակում, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորմամբ:	Levofloxacin	Liofilchem
37	Հակաբիոտիկի դիսկ N50 Պինիցիլին	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում՝50 հատ սրվակում, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորմամբ:	Penicillin	Liofilchem
38	Հակաբիոտիկի դիսկ N50 Աուգմետին	հակաբիոտիկային դիսկ, լրակազմում՝50 հատ սրվակում, պահպանման պայմանները՝ -20 C մինչև +8 C, գործարանային փաթեթավորմամբ:	Amoxacillin+Clav.acid/Augmentin	Liofilchem
41	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	Խնամքի հավաք կես տարվա համար 411-ի համար, լրակազմը պարունակում է Nozzle seal pipetor, Tube for pinch(2PCS/180mm, Seal piieceP, seal Pice S, Tube465, tube 510, Mixing belt 3IM, Packing L443085 բաղադրիչները, գործարանային փաթեթավորմամբ	KIT MAINTENANCE E2010 / E411 6 MONTHS	Roche Diagnostics
42	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	Խնամքի հավաք մեկ տարվա համար 411-ի համար, լրակազմը պարունակում է Tube for siper syring,Siper nozzle seal set2, Spring, Tube BW for measuring cell,Tube BW for sipper, O-ring NBR P4L456001, O-ring NBR P5 բաղադրիչները, գործարանային փաթեթավորմամբ	KIT SERVICE E411 12 MONTH	Roche Diagnostics
43	Ավտոմատ վարիացիոն միկրոպիպետ 0.1-2 մկլ	Փոփոխական ծավալով Միկրոպիպետ՝ 0,1-2 մկլ; բաժանումը՝ 0,002 մկլ; Ճշտությունը (սխալի տոկոսը). նվազագույն ծավալի դեպքում՝մինչև ±6,0 %; միջին ծավալի դեպքում՝ մինչև ±4,0%; առավելագույն ծավալի դեպքում՝ մինչև ±2,0%: Ճշգրտությունը (շեղման գործակիցը)՝ նվազագույն ծավալի դեպքում՝ մինչև 5.0%; միջին ծավալի դեպքում՝ մինչև 3,3 %; առավելագույն ծավալի դեպքում՝ մինչև 1,5 %:	Acura manual 825; 0.1-2 µl	Socorex

Ծանոթություն.

Ապրանքները պետք է ունենան.

1. Եվրամիության և /կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և /կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):
2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):
3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:
5.Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:
***թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատկարարման ժամանակ**
6. Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)
1.	Հակաբիոտիկի դիսկ N50 Դոքսացիկլին	լրակազմ	4	1,350	5,400
2.	Հակաբիոտիկի դիսկ N50 Բիսեպտոլ Co-trimoxazole	լրակազմ	4	1,350	5,400
3.	Հակաբիոտիկի դիսկ N50 Ցեֆեպին	լրակազմ	3	1,350	4,050
4.	Հակաբիոտիկի դիսկ N50 Նևիգրամոն Nalidix/ Acide	լրակազմ	2	1,350	2,700
5.	Հակաբիոտիկի դիսկ N50 Ֆլյուկոնազոլ	լրակազմ	2	1,350	2,700
6.	Հակաբիոտիկի դիսկ N50 Նիստատին	լրակազմ	2	1,350	2,700
7.	Հակաբիոտիկի դիսկ N50 Կետոկոնազոլ	լրակազմ	2	1,350	2,700
8.	Հակաբիոտիկի դիսկ N50 Կլոտրիմազոլ	լրակազմ	2	1,350	2,700
17.	Իմունոգլոբուլին E թեստ	լրակազմ	2	66,000	132,000
18.	Վիտամին D թեստ	լրակազմ	2	325,710	651,420
19.	Իմունոգլոբուլին E CS	լրակազմ	2	31,488	62,976
20.	Վիտամին D CS	լրակազմ	2	38,346	76,692
21.	Հալոգենային լամպ Cobas 400 plus-ի համար 12Վ/100Վատ	հատ	2	64,998	129,996
22.	Ազդանյութի ամրակալ Docking mechanism waste C1/C2/S1	լրակազմ	1	24,000	24,000
23.	Docking mechanism waste	լրակազմ	1	19,992	19,992
24.	LC109 զտիչ	լրակազմ	2	229,998	459,996
25.	LC174 քարթրիջներ	լրակազմ	4	219,999	879,996
26.	LC177 նախնական զտիչ	լրակազմ	4	459,999	1,839,996
27.	LC180 ռևերսիոսմոսային զտիչ	լրակազմ	1	1,299,996	1,299,996
28.	LC181 CO2 զտիչ	լրակազմ	3	1,250,000	3,750,000
29.	Ral StainBox սարքի ներկերի հավաքածու	լրակազմ	1	109,992	109,992
32.	Շեղյերի միջավայր փոշի	կգ	0.5	70,000	35,000
36.	Հակաբիոտիկի դիսկ N50 Լևոֆլքսացին	լրակազմ	2	1,350	2,700
37.	Հակաբիոտիկի դիսկ N50 Պինիցիլին	լրակազմ	2	1,350	2,700
38.	Հակաբիոտիկի դիսկ N50 Աուգմետին	լրակազմ	2	1,350	2,700
41.	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	լրակազմ	1	99,996	99,996
42.	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	լրակազմ	1	159,996	159,996
43.	Ավտոմատ վարիացիոն միկրոպիպետ 0.1-2 մկլ	հատ	2	108,000	216,000
Ընդամենը					**9,984,494**

Գնման ժամանակացույցը *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/20-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/
1.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Դոքսացիկլին/	33691423/895	5,400
2.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Բիսեպտոլ Co-trimoxazole/	33691423/896	5,400
3.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Ցեֆեպին/	33691423/897	4,050
4.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Նևիգրամոն Nalidix/ Acide/	33691423/898	2,700
5.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Ֆլյուկոնազոլ/	33691423/899	2,700
6.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Նիստատին/	33691423/900	2,700
7.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Կետոկոնազոլ/	33691423/901	2,700
8.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Կլոտրիմազոլ/	33691423/902	2,700
17.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Իմունոգլոբուլին E թեստ/**	33691423/907	132,000
18.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Վիտամին D թեստ/	33691423/908	651,420
19.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Իմունոգլոբուլին E CS//	33691423/909	62,976
20.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Վիտամին D CS/	33691423/910	76,692
21.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/**Հալոգենային լամպ Cobas 400 plus-ի համար 12Վ/100Վատ/	33691167/620	129,996
22.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ազդանյութի ամրակալ Docking mechanism waste C1/C2/S1 /	33691423/911	24,000
23.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Docking mechanism waste/	33691423/912	19,992
24.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**LC109 զտիչ/	33691423/913	459,996
25.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**LC174 քարթրիջներ/	33691423/914	879,996
26.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**LC177 նախնական զտիչ/	33691423/915	1,839,996
27.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**LC180 ուլտրսիոսմոսային զտիչ/	33691423/916	1,299,996
28.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**LC181 CO2 զտիչ/	33691423/917	3,750,000
29.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ral StainBox սարքի ներկերի հավաքածու/	33691423/918	109,992
32.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ/**Շեղլերի միջավայր փոշի /	33691422/518	35,000
36.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Լևոֆլքսացին/	33691423/920	2,700
37.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Պինիցիլին/	33691423/921	2,700
38.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակաբիոտիկի դիսկ N50 Աուգմետին/	33691423/922	2,700
41.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար/	33691423/925	99,996
42.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար/	33691423/926	159,996
43.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/**Ավտոմատ վարիացիոն միկրոպիպետ 0.1-2 մկլ/	33691167/621	216,000
Ընդամենը			**9,984,494**

Վճարման ժամանակացույց *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-9/20-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-9/20-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով **Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.**

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն